ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԳԻՄԱԽՈՍԻ
ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02- «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Մարտին Արմանի Աղաջանյանի «Պետական սոցիալական քաղաքականության բարեփոխումների նախադրյալները Հայաստանում. ՀՀ միասնական սոցիալական ծառայության արդյունավետության գնահատումը որպես բարեփոխումների հիմք» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Սոցիալական պաշտպանության համակարգերի արդիականացումը ներկա աշխարհաքաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումների համատեքստում առավել քան արդիական է: Այս զարգացումներից անմասն չէ նաև Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության համակարգը: Ոլորտային բարեփոխումները, որոնք իրականացվում են ՀՀ կառավարության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակված և իրականացվող ռազմավարական ծրագրերի ու քաղաքականության հիման վրա, առավել քան ժամանակին և սպասելի են: Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության և ռազմավարական զարգացման հենքային ուղղություններից մեկը սոցիալական պաշտպանանության համակարգի արդիականացումն է, ինչը մեծապես պայմանավորված է երկրի առջև ծառացած սոցիալ-տնտեսական բնույթի մարտահրավերներով, ինչպես նաև աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումներով, որոնք հրատապ դարձրեցին սոցիալական ոլորտի համակարգային բարեփոխումների անհրաժեշտությունը, որը կհանգեցնի սոցիալական ծառայությունների հասանելիության բարելավմանը և առկա կարիքների հասցեագրմանը:

Միասնական սոցիալական ծառայությունն (ՄՍԾ) իրականացնում է բնակչության սոցիալական կարիքների առավել հասցեական և ամբողջական գնահատման, սոցիալական աշխատանքի բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ: Սոցիալական ծառայությունների միասնական համակարգի ներդրումը հնարավորություն է տալիս բարձրացնել սոցիալական ծառայությունների որակը և ապահովել ընտանիքի սոցիալական կարիքներին համապատասխան բազմաբնույթ ու ամբողջական սոցիալական ծառայությունների փաթեթի տրամադրում:

Մարտին Աղաջանյանի ատենախոսությունը, պետական սոցիալական քաղաքականության բարեփոխումները՝ Միասնական սոցիալական ծառայության արդյունավետության գնահատման միջոցով, համապարփակ կերպով ներկայացնելու գիտական հետազոտություն է, որը առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության առջև ծառացած սոցիալ-տնտեսական բնույթի մարտահրավերներով: «Պետական սոցիալական քաղաքականության բարեփոխումների նախադրյալները Հայաստանում. ՀՀ միասնական սոցիալական ծառայության արդյունավետության գնահատումը որպես բարեփոխումների հիմք» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը

առավել քան արդիական է, քանի որ այն առաջին փորձն է համալիր կերպով վերլուծելու ՄՍԾ-ի կազմակերպչական, կառավարչական և գործառնական առանձնահատկությունները՝ հիմք ստեղծելով հետագա հետազոտությունների համար:

Թեկնածուական ատենախոսությունում հեղինակը համապարփակ գնահատել է Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության համակարգի մաս հանդիսացող ՄՍԾ-ն արդյունավետությունը՝ սոցիալ-տնտեսական փոփոխվող պայմաններում: Վերհանելով ՄՍԾ-ի գործունեության հիմնական թերությունները և սահմանելով դրանց բարելավման հիմնական ուղղությունները՝ հեղինակը հասել է ատենախոսության նպատակին, և վերջինիս հասնելու համար ատենախոսական հետազոտության շրջանակում սահմանել և վերլուծել է իր առջև դրված խնդիրները: Հեղինակը ատենախոսական աշխատանքում ըստ պատշաճի սահմանել է հետազոտության օբյեկտը և առարկան:

Ատենախոսության տեսական հիմքը պայմանավորված է հետազոտության առարկայի բազմակողմանի վերլուծության անհրաժեշտությամբ, որը ներառում է ՄՍԾ-ի տարբեր բաղադրիչների և դրանց առանձնահատկությունների քննությունը: Մեթոդաբանական առումով հեղինակը կիրառվել է որակական հետազոտության մեթոդներ՝ ապահովելով տվյալների հավաքման և վերլուծության բազմակողմանի մոտեցում, ինչպես նաև իրականացվել են փաստաթղթերի վերլուծություն և խորին հարցազրույցներ:

Հեղինակը հավաքված որակական տվյալների վերլուծությունը կատարել է օրինաչափությունների և ընդհանուր թեմատիկ միտումների արձանագրման միջոցով՝ կիրառելով թեմատիկ և բովանդակային վերլուծության մեթոդներ, ինչը հեղինակին հնարավորություն է ընձեռել բացահայտել համակարգի առջև ծառացած մարտահրավերները և արդյունավետության բարելավման ուղղությունները: Որակական տվյալներից զատ՝ ատենախոսության շրջանակում հեղինակը օգտագործել է նաև վիճակագրական տվյալներ, ինչը հնարավորություն է տվել հեղինակին կազմել նկարագրական վիճակագրական աղյուսակներ և գծապատկերներ, որոնք արտացոլում են սոցիալական քաղաքականության ոլորտում առկա հիմնական միտումները և փոփոխությունները:

Հարկ եմ համարում ընդգծել, որ հետազոտության ընթացքում հեղինակը պահպանել է էթիկայի նորմերը՝ տեղեկացված համաձայնության, տվյալների հետկանչման, գաղտնիության ու անանունության և տվյալների պաշտպանության միջոցառումների կիրառման միջոցով:

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է ՄՍԾ-ի համալիր վերլուծությամբ: Առանձնահատուկ պետք է նշել, որ ատենախոսության մեջ առաջին անգամ ուսումնասիրվել են ՄՍԾ-ի կառուցվածքային և գործառնական առանձնահատկությունները միասնաբար, ինչը հնարավորություն է տվել հեղինակին համապարփակ գնահատել վերջինիս արդյունավետությունը: Ատենախոսությունն առանձնանում է սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում առկա կոնկրետ խնդիրների բացահայտմամբ և իրատեսական առաջարկությունների

ներկայացմամբ: Ատենախոսության գործնական նշանակությունը վերջինիս արդյունքների ՄՍԾ-ի բարեփոխումների և զարգացման գործընթացներում ուղղակիորեն կիրառվելու մեջ է: Հարկ եմ համարում ընդգծել, որ ատենախոսությունը տրամադրում է հստակ առաջարկություններ, որոնք կարող են աջակցել կառավարման և ծառայությունների տրմադրման գործընթացների բարելամանը՝ նպաստելով սոցիալական պաշտպանության համակարգի առավել արդյունավետ և հասցեական գործառույթների իրականացմանը: «Պետական սոցիալական քաղաքականության բարեփոխումների նախադրյալները Հայաստանում. ՀՀ միասնական սոցիալական ծառայության արդյունավետության գնահատումը որպես բարեփոխումների հիմք» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը արժեքավոր ներդրում է նաև սոցիալական քաղաքականության մշակման և հանրային կառավարման համակարգի կատարելագործման առումով՝ տրամադրելով տվյալահեն լուծումներ Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության ոլորտի մարտահրավերների հաղթահարման համար:

Ատենախոսությունը բացկացած է երեք գլուխներից, տասներկու ենթագլուխներից, որոնք համապարփակ վերլուծում են սոցիալական պաշտպանության համակարգի տեսական հիմքերը և Միասնական սոցիալական ծառայության՝ որպես սոցիալական քաղաքականության իրականացնողի, արդյունավետությունը սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում: Հեղինակը հետազոտության ընթացքում մանրամասն ուսումնասիրել է ՄՍԾ-ի ներդրման գործընթացները, համապատասխան օրենսդրական և ռազմավարական փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտը կարգավորող իրավական և քաղաքական հիմքերը: Ատենախոսական աշխատանքում վերհանած մարտահրավերները հաղթահարելու նպատակով հեղինակը եզրակացության մեջ ներկայացրել է առաջարկությունների համալիր փաթեթ՝ նախատեսված ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացման համար: Գովելի է , որ ատենախոսը, աշխատանքում հետևողականորեն մատնանշելով ոլորտում առկա կոնկրետ խնդիրները, խոսում է նաև դրանց լուծումների վերաբերյալ՝ տալով հստակ և իրատեսական առաջարկություններ:

Դրական գնահատելով գրախոսվող աշխատանքը հարկ եմ համարում կատարել երկու դիտարկումներ, որոնք բացարձակ չեն նվազեցնում կատարված աշխատանքի գիտական արժեքը և կարող են դիտարկվել ատենախոսի հետագա վերլուծություններում:

1. Գտնում եմ, որ աշխատանքը միանշանակ առավել կշահեր, եթե դրանում առավել խորքային անդրադարձ կատարվեր միջազգային փորձին: Հայաստանի Հանրապետությունում, ՄՍԾ-ի հարթակի մշակման վրա ազդել են տարբեր երկրների և միջազգային կառույցների լավագույն փորձը: ՀՀ կառավարությունը և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՄՍԾ-ը մշակելիս ակտիվ համագործակցել են միջազգային մի շարք կազմակերպությունների հետ, ինչպես նաև օգտագործել է, տվյալ ոլորտում այլ երկրների հաջողված փորձը: Կարծում եմ աշխատանքը միանաշանակ կշահեր

եթե անդարադարձ կատարվեր այդ փորձին, և ոլորտում միջազգային կառույցների հետ համագործակցությանը:

2. Թեկնածուական ատենախոսությունում հեղինակը հպանցիկ է անդրադառնում սոցիալական քաղաքականության թվայնացմանը, հաշվի առնելով, որ ՄՄԾ-ին համընթաց զարգանում է նաև պետական սոցիալական ծառայությունների թվայնացման գործընթացը, կարծում եմ աշխատանքը մեծապես կշահեր, եթե համակարգի էլեկտրոնային հարթակներին ավելի հանգամանալից անդրադարձ լիներ: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կառավարության Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակին (e-request.am), որտեղ 2024-ի դրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ստանցել է 20.321 դիմում: Չնայած դրան համակարգում առկա են որոշակի բացթողումներ: Այս առումով հետաքրքիր կլիներ ծանոթանալ ատենախոսի անդրադարձին համակարգի թվայնացման և բացթողումների հաղթահարման վերաբերյալ:

Այս ամենի հետ մեկտեղ, հարկ եմ համարում նշել, որ ներկայացված դիտարկումներ չեն ստվերում ատենախոս Մարտին Աղաջանյանի կատարած աշխատանքը: Պետք է ևս մեկ անգամ փաստել, որ Մարտին Արմանի Աղաջանյանը հաջողությամբ կատարել է իր առջև դրված գիտական խնդիրներն ու նպատակները:

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով հեղինակի գիտական պատրաստվածությունը, ատենախոսության վերջնարդյունք եզրահանգումները և իրատեսական առաջարկությունները, **գտնում եմ, որ Մարտին Արմանի Աղաջանյանի «Պետական սոցիալական քաղաքականության բարեփոխումների նախադրյալները Հայաստանում. ՀՀ միասնական սոցիալական ծառայության արդյունավետության գնահատումը որպես բարեփոխումների հիմք» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:**

Պաշտոնական ընդդիմախոս՝

ԵՊՀ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնի դասախոս
քաղաքական գիտությունների թեկնածու Ա.Ս. Մնացականյան

Քաղաքական գիտությունների թեկնածու Ա.Ս. Մնացականյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Վ. Հովհաննիսյան

08.05.25թ.